



ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Մաթեմատիկայի, ֆիզիկայի և  
ինֆորմատիկայի ֆակուլտետի  
խորհրդի թիվ 4 նիստում

խորհրդի նախագահ՝

Գ. Դեմիրխանյան

“ 10 ” դեկտեմբ 2019 թ.

ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻ, ՖԻԶԻԿԱՅԻ ԵՎ ԻՆՖՈՐՄԱՏԻԿԱՅԻ  
ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՀԱԾՎԵՏԿՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ 2019

I. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Ֆակուլտետի գործունեությունը հաշվետու ժամանակահատվածում իր ռազմավարական պլանին համապատասխան:

հաշվետու ժամանակահատվածում Ֆակուլտետն իրականացրել է հետևյալ գործունեությունները.

1. Գնահատվել և վերանայվել են մասնագիտական կրթական ծրագրերը (ՄԿԾ),
2. Ընդլայնվել է ուսուցման դասավանդման գործընթացում IT տեխնոլոգիաների կիրառումը,
3. Ապահովվել է դասախոսների մասնագիտական, հետազոտական և ստեղծագործական աշխատանքի համար անհրաժեշտ պայմանների առկայությունը,
4. Իրականացվել է ԳԽ-ի կողմից հաստատված պրակտիկաների անցկացման բարելավված գործընթացի քարտեզագրումը,
5. Կիրառության մեջ է դրվել ինքնագնահատման համակարգը, կիսամյակի կտրվածքով իրականացվել են կրթական գործունեության մշտադիտարկում, պարբերական դասալսումներ, քննարկվել են դասավանդման մեթոդների արդյունավետությունը,
6. Ապահովվել է ֆակուլտետի բոլոր դասախոսների և ուսանողների միասնականությունը սոցիալական մեդիայում,
7. Ստեղծվել են համապատասխան պայմաններ դասախոսների մասնակցության համար միջազգային և հանրապետական գիտական ծրագրերին ու մրցույթներին,
8. Ֆակուլտետի ամբիոններում աճել է մրցունակ գիտական և նորարարական ներուժը,
9. Շարունակվել է համագործակցությունը հանրապետության և արտերկրների գիտահետազոտական հիմնարկների հետ,
10. Խթանվել է դասախոսների կողմից ուսումնագիտական և գիտամեթոդական ուսումնական կյուրերի (ձեռնարկներ, դասագրքեր, մենագրություններ և այլն) ստեղծումը,
11. Խթանվել է ամբիոններում գիտական կադրերի պատրաստումը,
12. Կիրառվել է դասախոսական կազմի վարկանիշային գնահատման համակարգը, համալրվել է դասախոսական կազմը,
13. Իրականացվել է դասախոսների անձնակազմի վերապատրաստում,
14. Ապահովվել է դասախոսական կազմի մասնակցությունը ֆակուլտետի կառավորման, որոշումների ընդունման գործընթացներում, Ֆակուլտետի և ամբիոնների գործունեության թափանցիկությունը,
15. Ապահովվել է դասախոսական կազմի մասնակցությունը ֆակուլտետում իրականացվող ծրագրերին,
16. Անցկացվել է 11 –րդ և 12-րդ դասարանների աշակերտների օլիմպիադա մաթեմատիկա, ֆիզիկա և ինֆորմատիկա առարկաներից, որին մասնակցել են տարբեր դպրոցների շուրջ 69 աշակերտ,
17. Անցկացել են մասնագիտական ամենամսյա սեմինարներ և մեկ միջազգային կոնֆերանս «Մաթեմատիկական կրթություն» խորագրով,
18. Ուսանողները լայնորեն ներգրավվել են ֆակուլտետում իրականացվող գիտական հետազոտությունների գործընթացների մեջ, կոնֆերանսների, սեմինարների և այլ գիտաուսումնական ու կիտամեթոդական աշխատանքներում,
19. Մշտական ուշադրության կենտրոնում է գտնվել շրջանավարտների զբաղվածության ապահովման խնդիրը՝ ուղղորդելով նրանց ուսուցիչների թափուր տեղեր ունեցող հանրակրթական հաստատություններ,
20. Ֆակուլտետում ստեղծված է ՏՏ-ով հագեցած ժամանակակից ուսումնական միջավայրը,
21. Լայնորեն կիրառվում է էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգը,
22. Ֆակուլտետի կազմում գտնվող լաբորատորիաները և համակարգչային լսարանները հագեցված են, ստեղծված է մասնագիտական գրականության և ուսումնական նյութերի էլեկտրոնային գրադարան,
23. Համալսարանի կայք-էջում պարբերաբար (առնվազն ամիսկ մեկ անգամ) թարմացվում է ֆակուլտետի էջը,
24. Ֆակուլտետի ուսանողները ներգրավված են ամառային դպրոցների և այլ կրթամշակութային ծրագրերում:

Վերլուծել, թե ինչպես է ֆակուլտետը վերհանել ներքին և արտաքին շահակիցների կարիքները, պահանջները բացահայտող ինչ մեխանիզմներ է կիրառել:

Ներքին շահակիցների կարիքները և պահանջները բացահայտող մեխանիզմներն են.

1. Քննարկումները դեկանատի և ֆակուլտետի խորհրդի նիստերում,

2. Ամբիոնների նիստերում,
3. Որակի մշտադիտարկման հանձնաժողովի նիստերում կազմակերպվող քննարկումների միջոցով,
4. Մոցիոլոգիական հարցումների միջոցով,
5. Կուրսերի ավագների հետ պարբերական (ամիսը առնվազն երկու անգամ) հանդիպումների ընթացքում:

Արտաքին շահակիցների կարիքները և պահանջները բացահայտող մեխանիզմներն են.

1. Քննարկումները հանրակրթական հաստատությունների ղեկավարների և ուսուցչական անձնակազմի հետ դպրոցների այցելության ժամանակ, այդ թվում՝ ուսանողների պրակտիկայի ընթացքում,
2. Հանրակրթության ներկայացուցիչներին ֆակուլտետի խորհրդի կազմի մեջ ներգրավման միջոցով՝ ապահովելով նրանց մասնակցությունը ֆակուլտետի գործունեությանը առնչվող հարցերի քննարմանը,
3. Դպրոցների ներկայացուցիչներին պետական ավարտական քննությունների հանձնաժողովների կազմի մեջ ընդգրկումը:
4. Երևանի հիմնական դպրոցների աշակերտների համար Տեխնոլոգիական կրթություն ամբիոնի «Արմատ» ինժինեռական լաբորատորիայում գործում է ռոբոտաշինության խմբակ (ղեկ. դոցենտ Ն. Օրոյան)
5. Facebook սոցիալական հարթակում գործում է «Ի՞նչ մասնագիտություն ընտրել» և « Հեռավար անվճար ֆիզիկամաթեմատիկական դպրոց» էջերը և «Տեխնոլոգիա և ձեռնարկչություն» որոնք ունեն ավելի քան 500 մասնակից:
6. Նկարահանված և Yuotub-ում տեղատրված են «Հաջողության բանաձև» գովազդային տեսանյութ:
7. Yuotub-ում տեղատրված են «Դիմորդի խորհրդատու» խորագրով երեք 3 բաց դաս՝ նվիրված ֆիզիկա առարկայից ընդունելության քննությունների հետ առնչվող հարցերի քննարկմանը ու խնդիրների լուծմանը:

Ֆակուլտետը հաշվետու տարում իրականացրել է աշխատանքներ իր առաքելության ու նպատակների իրականացման գնահատման և բարելավման ուղղությամբ:

Ռազմավարական ծրագրի իրականացման գործում դասավանդողների, ուսումնառողների ներգրավվածությունը, ստացվող արձագանքները և ապահովմանը նպաստող մեխանիզմների վերլուծություն (նաև տրամադրել համապատասխան հիմքեր և կատարել հղումներ համապատասխան փաստաթղթերին):

Ռազմավարական ծրագրի իրականացման նպատակով ֆակուլտետում ստեղծվել են հետևյալ մշտական և միանգամյա հանձնախմբերը.

1. *Ֆակուլտետի խորհուրդը* կազմված է ֆակուլտետի կանոնադրությանը պահանջներին համապատասխան 32 անդամից, այդ թվում հինգ մասնագիտություններից համաչափորեն ուսանողական խորհրդի կողմից ընտրված 8 ուսանողներից, ֆակուլտետի ամբիոնների դասախոսներից (ռեկտորի հրաման),
2. *Դեկանատի խորհուրդի* անդամներն են ամբիոնների վարիչներին, դեկանի տեղակալները, ուսանողական խորհրդի նախագահը,
3. *Որակի մշտադիտարկման հանձնաժողովի* անդամներն են դեկանի գիտական գծով տեղակալը, ամբիոնների ներկայացուցիչները (ամբիոնի ներկայացմամբ), ուսանողների ներկայացուցիչները (ուսանողական խորհրդի ներկայացմամբ), - ռեկտորի հրաման
4. *Պրակտիկայի պատասխանատուների հանձնախումբը* բաղկացած է ֆակուլտետի և ամբիոնների պրակտիկայի պատասխանատուներին (դեկանի և ամբիոնների վարիչների ներկայացմամբ)
5. *Արտաքին շահակիցների հետ աշխատող հանձնախումբ*՝ ֆակուլտետի դեկան, ամբիոնների վարիչներ, ամբիոնների 4 դասախոս, ուսանողական խորհրդի ներկայացուցիչներ,
6. *Աշակերտների համար անցկացվող մրցույթներ, օլիմպիադաներ* կազմակերպող հանձնախումբ՝ ֆակուլտետի դեկան, ամբիոնների վարիչներ, ամբիոնների դասախոսներ (ամբիոնի վարիչի ներկայացմամբ):
7. *ՌԻսումնական գործնթացում լայնորեն կիրառվում են տեղեկատվական հաղորդակցական ու էլեկտրոնային ուսուցման համակարգերը՝ Google classroom հարթակը,*
8. *Դասախոսների և ուսանողների ակտիվ մասնակցությամբ հանրակրթական ուսումնական հաստատություններում իրականացվում են մասնագիտական կողմնորոշմանն ուղղված*

II. ՖԱԿՈՒՄԻՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Ֆակուլտետի կառավարման համակարգն ապահովում է կանոնակարգված գործընթաց և ունի կրթական ու այլ նպատակների իրականացման համար անհրաժեշտ մարդկային և նյութական ռեսուրսներ: Ֆակուլտետը հաշվետու տարում դասախոսներին և ուսանողներին իրենց առնչվող որոշումների կայացմանը մասնակցելու հնարավորություն է ընձեռել:

Վերլուծել հաշվետու տարում ֆակուլտետի կազմակերպական կառուցվածքի արդյունավետությունը:

Հաշվետու ժամանակաշրջանում Ֆակուլտետի կառավարման համակարգն ապահովվել է կանոնակարգված գործընթացը: Ֆակուլտետում առկա են կրթական ու այլ նպատակների իրականացման համար անհրաժեշտ մարդկային և նյութական ռեսուրսները: Դասախոսները և ուսանողները իրենց հետ առնչվող որոշումների քննարկման հնարավորություն են ունեցել՝ մասնակցելով ֆակուլտետում գործող խորհուրդների ու հանձնախմբերի աշխատանքներին:

Ֆակուլտետը հաշվետու տարում իր նպատակներին համապատասխան մշակել և իրականացրել է պլանավորում, մշտադիտարկել իր մեխանիզմներով:

Վերլուծել պլանավորման և վերջիններիս իրականացման արդյունավետությունը: Ինչքանով է այն նպաստում ֆակուլտետի նպատակների, խնդիրների /առաքելության/ արդյունավետ իրականացմանը:

Ֆակուլտետում գործող խորհուրդները և հանձնախմբերի աշխատանքները ուսումնական տարվա կտրվածքով պլանավորվում են՝ համապատասխան ֆակուլտետի նպատակների և խնդիրների, կազմվում է աշխատանքների իրականացման ժամանակացույց:

III. ՖԱԿՈՒՄԻՆԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ

Ֆակուլտետի մասնագիտությունների կրթական ծրագրերը և դրանց մշտադիտարկման բարելավման ուղղությամբ տարված աշխատանքները որքանով են համապատասխանում մասնագիտական որակավորմանը՝ ըստ շտրիվող որակավորումների ակնկալվող ուսումնառության արդյունքների:

Վերլուծել ՄԿԾ-ների բարելավման ուղղությամբ տարված աշխատանքները, նշել ուսումնառության ակնկալվող արդյունքների համահունչ լինելը և համադրելիությունը մասնագիտական որակավորմանը և Որակավորումների ազգային շրջանակին:

Հաշվետու ժամանակաշրջանում վերանայվել ու լրամշակվել են բակալավրիական ու մագիստրոսական կրթական ծրագրերը՝ առավելագույնս համահունչ դարձնելով դրանք մասնագիտական որակավորմանը և Որակավորումների ազգային շրջանակին: Մասնավորապես կոռելացվել են հեռակա և առկա ուսուցման ուսումնական ծրագրերը, ճշկրտվել է գնահատման համակարգը, հստակեցվել են առարկայական նկարագրերը, փորձ է կատարվել գործնականում կիրառել կրեդիտային համակարգի տված հնարավորությունները՝ կապված զուգահեռ երկրորդ մասնագիտության ուսումնական գործընթացի կազմակերպման հետ:

Հաշվետու տարում ֆակուլտետը կատարել է մասնագիտությունների կրթական ծրագրերի ուսումնառության ակնկալվող արդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրություն, մշակել մոտեցումներ և քաղաքականություն, որը նպաստում է ուսանողակենտրոն ուսուցմանը:

Վերլուծել ուսումնառության արդյունքները և նրանց համապատասխան դասավանդման և ուսումնառության մոտեցումներն ու մեթոդները, դասավանդման և ուսումնառության մոտեցումների և մեթոդների պարբերաբար արդիականացման ուսումնասիրությունները, քննարկումները, դասավանդման նյութերի և ռեսուրսների արդիականացման շուրջ կատարված աշխատանքները, ՄԿԾ-ում նշված դասավանդման և ուսումնառության մեթոդների արդյունավետությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

Ֆակուլտետի դասախոսներն իրենց աշխատանքում կիրառում են դասավանդման բոլոր եղանակները՝ նախապատվություն տալով ուսուցման ինտերակտիվ մեթոդին:

Ուսանողակենտրոն ուսուցումն իրականացման ուղղությամբ ֆակուլտետն իրականացրել է Classroom էլեկտրոնային կրթական հարթակում ակտիվ գործունեություն, ուսանողներին տրամադրելով ինչպես մասնագիտական ուսումնական նյութեր, այնպես էլ հավելյալ տեղեկատվություն՝ կապված ուսումնասիրվող առարկայի հետ: Ուսուցման այս եղանակը նպաստում է նաև հայերեն մասնագիտական գրականության սրբոճմանը, ինչը խիստ կարևոր է մեր իրականության համար: Այս առումով ֆակուլտետն ունի անհրաժեշտ տեխնիկական և մարդկային ռեսուրսները:

Ուսանողների գնահատման համակարգը ֆակուլտետում, գնահատման բաղադրիչները և ակադեմիական ազնվությունը հաշվետու տարում:

Վերլուծել ֆակուլտետում ուսումնառության արդյունքներին համապատասխան ֆակուլտետում/ամբիոններում սահմանված գնահատման մեթոդներն ու չափանիշները, ակադեմիական ազնվությունն ապահովող միջոցառումները, գնահատման մոտեցումների առաջավոր փորձի համեմատական վերլուծությունները, ուսումնառողների գնահատման մոտեցումների վերանայումները և ուսանողների գնահատման ու գրագողության դեմ իրականացվող պայքարի քայլերի արդյունավետությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

Ուսանողների գնահատման համակարգում գործում է 100 միավորնաոց սանդղակը, որում որպես բաղադրիչներ ներառված են.

Միջանկյալ ստուգմամբ ավարտվող դասընթացներ՝

1. Միջանկյալ ստուգում 1 40%
2. Միջանկյալ ստուգում 2 40%
3. Հաճախում 5%
4. Ընթացիկ ստուգում 15%

Ամփոփիչ ստուգմամբ ավարտվող դասընթացներ՝

1. Միջանկյալ ստուգում 1 25%
2. Միջանկյալ ստուգում 2 25%
3. Հաճախում 5%
4. Ընթացիկ ստուգում 15%
5. Ամփոփիչ ստուգում 30%

Ֆակուլտետի աշխատանքները մասնագիտությունների կրթական ծրագրերը նմանատիպ այլ ճանաչված մասնագիտությունների կրթական ծրագրերին համապատասխանեցնելու, ուսանողների և դասավանդողների շարժունությանը, միջազգայնացմանը նպաստելու ուղղությամբ:

Մասնագիտության կրթական ծրագրի տարանջատումը տեսական, գործնական բաղադրիչների: Ֆակուլտետի ներսում կամ տեղական ու միջազգային այլ հաստատությունների տվյալ կամ այլ մասնագիտության կրթական ծրագրերին համահունչ աշխատանքներ: Ուսանողների և դասավանդող անձնակազմի շարժունության հնարավորություններն ապահովող և պարզաբանող մոտեցումներ:

Վերլուծել և հիմնավորել մասնագիտության կրթական ծրագրերի բովանդակային հուսալիությունը, ֆակուլտետի և այլ հաստատությունների համապատասխան մասնագիտական ծրագրերի հետ համադրելիությունը, ինչպես նաև այդ մոտեցումների արդյունավետությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/: Ինչքանով է այն նպաստում ուսումնառողների ու դասավանդողների շարժունությանը:

Կրթական գործընթացների կառավարման և բարեփոխման վարչության հետ համատեղ ֆակուլտետը իրականացրել է մասնագիտական կրթական ծրագրերի վերանյում՝ հաշվի առնելով ռուսական և եվրոպական մի շարք երկրների մանկավարժական համալսարաններում գործող մասնագիտական կրթական ծրագրերը: Վերանայվել են ուսումնական պլաններում հաստատված առարկաների տեսական և գործնական պարապմունքների ժամաքանակների բաշխվածությունները՝ նախապատվությունը տալով գործնական աշխատանքներին: Խիստ կարևորվել է պրակտիկան, նրա կազմակերպումը, գործառույթները և անցկացման վերահսկումը: Ֆակուլտետում փորձարկվում է որոշ առարկաների դասավանդումը օտար լեզվով, ինչը կնպաստի ուսանողների օտար լեզվով մասնագիտական լեզվամտածողության զարգացմանը:

Ուսանողների և դասավանդողների ակտիվությունը բարձրացնելու նպատակով ֆակուլտետում դասավանդումն իրականացվում է էլեկտրոնային կրթական հարթակի կիրառմամբ, ինտենսիվացել են ամբիոններում կազմակերպվող գիտական սեմինարներ:

Ֆակուլտետում հաշվետու տարում իրականացված մասնագիտության կրթական ծրագրերի մշտադիտարկման, արդյունավետության գնահատման, բարելավման աշխատանքները:

Ճահակիցների կարիքները հաշվի առնող՝ ուսումնառության ակնկալվող արդյունքների վերանայման փաստեր: Արտաքին և ներքին շահակիցների կարիքների ուսումնասիրության մեթոդները: Մասնագիտությունների կրթական ծրագրերի պարբերաբար գնահատման մեխանիզմները: Վերլուծել ՄԿԾ-ի մշտադիտարկման, գնահատման և վերանայման մեխանիզմները և դրանց արդյունավետությունը, դրանց հիման վրա իրականացրած բարելավումները:

Ֆակուլտետը ամբիոնների հետ միասին հաշվետու տարվա ընթացքում պարբերաբար մշտադիտարկել և քննարկել է ՄԿԾ-երը (ֆակուլտետի խորհուրդ, ամբիոնների և դեկանատի նիստեր և այլն), ամբիոններն իրականացրել են դասալսումներ, և համապատասխան նիստերում առաջ քաշել նրանց արդյունավետության բարձրացման և բարելավման խնդիրները, որոնցից մեկն էլ հանդիսանում է նյութատեխնիկական բազայի պարբերաբար թարմացումը և դասախոսների վերապատրաստումը:

#### IV. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ

Ֆակուլտետում հաշվետու տարում իրականացված ուսանողների հավաքագրման աշխատանքները, մեխանիզմները:			
Ֆակուլտետում ուսանողների թիվը՝ ըստ կրթական ծրագրերի և ուսուցման ձևերի:(2017-18 ուստարի)			
Բակալավրի	առկա	339	
	հեռակա	296	
Մագիստրոսի	առկա	135	
	հեռակա	-	
Ուսումնառողների շարժը հաշվետու տարվա կտրվածքով			
Ուսանողների արտահոսք			
Հաստատություն/երկիր		թիվ	
1	Ազատվել է իր դիմումի համաձայն	Առկա՝ 8, հեռակա՝ 5	
2	Հեռացվել է անբավարար առաջադիմության, անհազելի բացակայության և ուսման վարձի պարտքի պատճառով	Առկա՝ 9, հեռակա՝ 13	
3	Մեկնել է ազգային բանակ	Առկա՝ 5, հեռակա՝ 13	
4	Ամփոփիչ ատեստավորման քննությունից ստացել են անբավարար գնահատական	Առկա՝ 1, հեռակա՝ 1	
Ուսանողների ներհոսք			
Հաստատություն/երկիր		թիվ	
1	շարունակական	Առկա՝ 0, հեռակա՝ 18	
2	Միյուռք (Վրաստան)	Առկա՝ 7, հեռակա՝ 2	
3	վերականգնված	Առկա՝ 21, հեռակա՝ 8	
Հեռացումներ և վերականգնումներ		տոկոս	թիվ
1	Դուրս մնացած ուսանողների տոկոսը/ թիվը	Առկա՝ 4.6 %	22
		Հեռակա՝ 10.5 %	31
2	Վերականգնված ուսանողների տոկոսը/ թիվը	Առկա՝ 4 %	21
		Հեռակա՝ 9.5 %	28
Վերլուծել ֆակուլտետի ուսանողների հավաքագրման իրականացման մեխանիզմների արդյունավետությունը:			
Ֆակուլտետում իրականացվում են մի քանի միջոցառումներ՝ ուղղված ուսանողների հավաքագրման, որոնցից յուրաքանչյուրն ունի իր ներդրումը հավաքագրման արդյունավետության մեջ.			

1. Անմիջական կապը պորտենցիալ դիմորդների հետ իրականացվում է հետևյալ եղանակներով
  - Ամբիոնների դասախոսների և ֆակուլտետի աշխատակիցների կողմից իրականացվել են դպրոցների և այլ հանրակրթական հաստատությունների, այդ թվում՝ փարբեր շրջաններում գործող, պարբերական այցելություններ:
  - Կազմակերպվել են աշակերտների այցելություններ ֆակուլտետ՝ օգտագործելով նաև մանկավարժական պրակտիկա անցնող ուսանողների ներուժը:
  - Կնքվել է լայնածավալ համագործակցության պայմանագիր Երևանի թիվ 2 ավագ դպրոցի հետ, որի շրջանակում անցկացվել են փոխայցելույուններ, բաց դաս, լաբորատոր պարապմունքներ և այլն:
  - Ֆակուլտետում գործում է «ռոբոտոտեխնիկայի» և «WEB ծրագրավորման» խմբակներ, որտեղ ներգրաված են փարբեր դպրոցների աշակերտներ:
2. Տեղեկարվական տեխնոլոգիաների կիրառմամբ
  - Facebook-ում ստեղծվել են երկու խմբեր՝ «Ի՞նչ մասնագիտություն ընտրել» և «Էտովար ֆիզիկամաթեմատիկական անվճար դպրոց», որոնց անդամակցում են շուրջ 400 շահառու:
  - ՀՊՄՀ լրատվական կենտրոնի օժանդակությամբ ու աշխատասիրությամբ և ՀՊՄՀ հենակետային վարժարանի աշակերտների մասնակցությամբ նկարահանվել են երեք հոլովակներ՝ նվիրված ֆիզիկա առարկայի ընդունելության քննությունների հարցերին: Սրանցից երկուսը տեղադրվել Youtube-ում ([www.youtube.com/watch?v=eiCiP7jzJDY&t=203s](http://www.youtube.com/watch?v=eiCiP7jzJDY&t=203s) և [www.youtube.com/watch?v=G-HQRF64qeU&t=3018s](http://www.youtube.com/watch?v=G-HQRF64qeU&t=3018s)), որոնց դիտել են շուրջ 1000 շահառու:
  - ՀՊՄՀ լրատվական կենտրոնի կողմից նկարահանվել են «Հաջողության բանաձև» խորագրով հոլովակներ, որոնք ներկայացնում են ֆակուլտետի մասնագիտությունները: Այս հոլովակները ցուցադրվել են հեռուստատեսությամբ, տեղադրված են սոցալական ցանցերում և ՀՊՄՀ կայք-էջում:
  - Գովազդային հայտարարություններ են տեղադրվել նաև [dasar.am](http://dasar.am) կայքում, շրջանային թերթերում:
3. Ֆակուլտետի ուսանողական խորհուրդը գործուն մասնակցություն է ունեցել ՀՊՄՀ ուսխորհրդի կողմից իրականացված քարոզարշավին՝ նվիրված ուսանողների հավաքագրման:

Վերհանել հեռացումների և վերականգնումների պատճառները:

Ուսանողը հեռացվում է համալսարանից՝ անբավարար առաջադիմության, ուսման վարձը սահմանված ժամանակահատվածում չվճարելու և անհարգելի սխտեմատիկ բացակայությունների դեպքում: Ուսանողը հավանդության, հանրապետությունից բացակայելու կամ այլ պատճառով, իր դիմումի համաձայն, կարող է ընդհատել իր ուսումնառության ընթացքը՝ հետագայում վերականգնվելու պայմանով:

Ուսման ընթացքը ընթացավում է նաև Ազգային բանակ մեկնելու պատճառով և վերականգնվում է Ազգային բանակից զորացրվելուց հետո՝ ուսանողի դիմումի համաձայն:

Հաշվետու տարում ֆակուլտետի ուսանողների ներգրավվածությունը մասնագիտական գիտահետազոտական աշխատանքներում:		
Ֆակուլտետի գերակա գիտահետազոտական աշխատանքներում ներգրավված ուսանողների թիվը:		
Բակալավր		2
Մագիստրոս		12
Ընդհանուր		14
Ուսումնառողների մասնակցությամբ իրականացվող ծրագրերի ցանկը և դրանցում ներգրավված ուսանողների թիվը		
	Գիտահետազոտական ծրագիր	ուսանողների թիվ
1		
2		
3		
4		
Ուսումնառողների հեղինակությամբ և/կամ համահեղինակությամբ տպագրված աշխատանքների թիվը		
	Տպագրված աշխատանք	ուսանողների թիվ
1	Ֆ.մ.գ.դ. Գ. Գ. Դեմիրխանյան, Ֆ.մ.գ.թ. Հ. Գ. Դեմիրխանյան, մագիստրոս Ա. Հ.	1

	Հարությունյան, «Er <sup>3+</sup> իոնի(4f <sup>11</sup> ) Ռակայի գոնեալոգիական գործակիցների հաշվումը», ՀՊՄՀ Գիտական տեղեկագիր, 1(30), 2017, էջ 40-45	
2	Ֆ.մ.գ.դ. Գ.Գ. Դեմիրխանյան, Ֆ.մ.գ.թ. Հ.Գ. Դեմիրխանյան, մագիստրոս՝ Ա.Հ.Հարությունյան, «ՇՏԱՐԿԻ ԽՆԴԻՐԸ LiNbO3-Tm3+ ԲՅՈՒՐԵՂԻ ՀԱՄԱՐ», ՀՊՄՀ Գիտական տեղեկագիր, 2018,(ընդունված է հրատարականման)	1
3	Ֆ.մ.գ.թ., դոցենտ, պրոֆ. պ. Ա.Ս. Թարոյան, Ա.Խ. Ասատրյան, Ն.Ն.Մխիթարյան, մագիստրոս Լ.Վ. Ավետիսյան «Տիեզերական ճառագայթների բևեռային անկյունային բախշման էմպիրիկ բանաձև», ՀՊՄՀ Գիտական տեղեկագիր, 1(30), 2017, էջ 46-51	1
4	Եզանյան Ա., Հովհաննիսյան Կ., Կոկանյան Է, Բուտաեվա Տ., մագիստրոս՝ Հովսեփյան Լ. "Estimation of heat expansion coefficients of reare-earth garnet in a wide temperature range ", J. of Cont. Physics NAS, 53(2), pp.201-207, Yerevan 2018	1
5	մ.գ.թ., Ա.Ա.Թադևոսյան, մագիստրոս Հ.Գալստյան «Ուսումնական հաստատության լոկալ ցանցի մոդելի կառուցում cisco packet tracer միջավայրում» ՀՊՄՀ Գիտական Տեղեկագիր, N 4(33), (էջ 47-53), Երևան, 2017	1
6	մ.գ.թ.Ն.Գրիգորյան, դոցենտ Գ.Պետրոսյան, մագիստրոս՝ Վ. Դարգիյան «Վիրտուալ իրականության մոդելավորման և իմիտացիոն խաղերի կիրառման դերը ուսուցման գործընթացում», Մանկավարժական միտք, Երևան 2018, N 1-2, էջ 9-14, Երևան, 2018	1
7	մ.գ.թ., Գրիգորյան Ն., մ.գ.թ., Ս.Ասատրյան, մագիստրոս՝ Սահակյան Ա. «SPSS ծրագրի կիրառման մեթոդաբանական առանձնահատկությունները կրթական հետազոտություններում», Համահայկական գիտ. նյութերի ժողովածու., էջ 263-268, Եր.: ՀՌՀ հրատ., 2018	1
8	Ֆ.մ.գ.թ. Գ. Պետրոսյան, բակալավր՝ Ա.Ավագյան << Միականալ մասսայական սպասարկման համակարգի իմիտացիոն մոդելի ուսուցման մի քանի հարցեր>>, Մանկավարժական Միտք, Երևան 2016, № 1-2, Ջանգակ հր., ISSN 1829-0213, էջ 204-209	1
9	Ֆ.մ.գ.թ. Գ. Պետրոսյան, բակալավր՝ Է. Ավագյան << Համացանցի ազդեցության և գովազդի արդյունավետության վերլուծությունը>>, ՀՀ ԳԱԱ Գիտ. Միջ. Կենտրոն, Կաճառ գիտական տարեգիրք, "Ջանգակ", էջ 31-37, Երևան-2017	1
10	Ֆ.մ.գ.թ. Գ.Պետրոսյան դոցենտ Ն.Գրիգորյան, մագիստրոս՝ Վ. Դարգիյան «Վիրտուալ իրականության մոդելավորման և իմիտացիոն խաղերի կիրառման դերը ուսուցման գործընթացում», Մանկ. միտք, 1-2 (68-69), ISSN 1829-0213, էջ 9-14, 2018	1
11	տ.գ.թ.Ա.Նավասարդյան, մագիստրոս՝ Ա.Մելքոնյան «Բազիսա-յին ներդրումային ցանցերի մեքենայական սինթեզը և դրա կիրառումը Արհեստական բանականության հիմունքները առարկայի դասավանդման գործընթացում», Բնագետ 3-4 Երևան 2016թ	1
12	տ.գ.թ. Ա.Նավասարդյան, մագիստրոս՝ Հ. Խաչատրյան, բակալավր՝ Ա.Պետրոսյան «Web տեխնոլոգիաների դասավանդման մի Web նախագծի մասին», Մանկավարժական միտք 3-4, Երևան 2016թ	2
13	տ.գ.թ.Ա.Նավասարդյան, մագիստրոսներ՝ Հ.Խաչատրյան, Ա.Խաչատրյան «Խաղային մեթոդով ինտեռակտիվ ուսուցման մի web նախագծի մասին», Մանկ. միտք 3-4, Երևան 2017թ	2
14	տ.գ.թ. Ա.Նավասարդյան, պատմ. ուսուցչուհի՝ Ա.Մկրտչյան, մագիստրոս՝ Գ.Խնկոյան "Հայկական եկեղեցիների էլեկտրոնային շտեմարանի և „Հայոց եկեղեցու պատմություն" առարկայի հեռահար դասավանդման մի Web նախագծի մասին», Բնագետ, 2018 (գտնվում է տպագրման փուլում)	1
15	տ.գ.թ.Ա.Նավասարդյան, աշխարհ. Ուսուցչուհի՝ Լ.Բադալյան, մագիստրոս՝ Գ.Խնկոյան "Ինտեռակտիվ ուսուցման կազմա-կերպման մի Web կայքի և նրա հիմքում ընկած մեթոդա-բանության մասին», Մանկ., 2018 (գտնվում է տպագրման փուլում)	1

V. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԸ

**Ֆակուլտետում գործում են կրթական ծրագրերն իրականացնելու համար անհրաժեշտ որակավորումներ ունեցող պրոֆեսորադասախոսական կազմի ընտրության` ՀՊՄՀ քաղաքականությանը համապատասխան հստակ մոտեցումներ :**

Վերլուծել ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի աշխատանքի արդյունավետությունը հաշվետու տարում: Վերլուծել ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական որակների համապատասխանությունը ֆակուլտետի մասնագիտական կրթական ծրագրերի նպատակներին:

*Ֆակուլտետում դասավանդում են բարձր մասնագիտական կարողություններ և փորձառություն ունեցող դասախոսներ. հիմնական հաստիքով 51 (այդ թվում՝ գիտությունների 10 դոկտոր) և հրավիրված 18 (այդ թվում՝ գիտությունների 8 դոկտոր և ԳԱԱ –ի 2 ակադեմիկոս ու 1 թղթակից անդամ): Դասախոսների թվաքանակի բաշխումը ըստ ամբիոնների բերված է ստորև:*

1. Մաթեմատիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոն

Անվանում	Կանոթ	մոկտո	պրոֆեսոր	գիտ.թեկն.	դոցենտ	ասիստենտ	դասախոս	Ընդ.
Հաստիքային	7	5	6	6	5	1	4	34
Համատեղող	0	4	3	4	5	0	0	16
Ժամավճարային	0	0	0	0	0	0	0	0
Ընդամենը	7	9	9	10	10	1	4	50
ՊԴԱ-ի միջին տարիք	Մինչև 31		31-40	41-50	51-60	61-70	70-ից բարձր	
58	0	4	1	0	5	6	16	

2. Ֆիզիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոն

Անվանում	Կանոթ	մոկտո	պրոֆեսոր	գիտ.թեկն.	դոցենտ	ասիստենտ	դասախոս	Ընդ-նը
Հաստիքային	1	1	4	4	3	1	0	14
Համատեղող	3	5	5	2	1	0	1	17
Ժամավճարային	1	1	1	0	0	0	0	3
Ընդամենը	5	7	10	6	4	1	1	34
ՊԴԱ-ի միջին տարիք	Մինչև 3		31-40	41-50	51-60	61-70	70 բարձր	
58	-	3	1	-	3	5	12	

3. Տեխնոլոգիական կրթության ամբիոն

Անվանում	Կանոթ	մոկտո	պրոֆեսոր	գիտ.թեկն.	դոցենտ	ասիստենտ	դասախոս	Ընդ-նը
Հաստիքային	3	1.5	2.5	3	4	1	-	8
Համատեղող	-	-	-	0.5	0.5	-	-	-
Ժամավճարային	-	-	-	-	-	-	-	-
Ընդամենը	3	1.5	2.5	3.5	4.5	-	-	8
ՊԴԱ-ի միջին տարիք	Մինչև 31		31-40	41-50	51-60	61-70	70 բարձր	
57	-	1	-	4	1	2	8	

4. Ինֆորմատիկայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոն

Անվանում	Կանոն	Դրսիս	Ստրախ	Գիտ. թեկն.	Դրոցնտ	Սախտունտ	Ուսումնա	Ընդ-նը
Հաստիքային	3	2	3	15	11	3	2	39
Համատեղող	0	1	0	1	0	1	0	3
Ժամավճարային	0	0	0	0	0	0	0	0
Ընդամենը	3	3	3	16	11	4	2	42
<i>ՊԴԱ-ի միջին տարիք</i>	Մինչև 31		31-40	41-50	51-60	61-70	70 բարձր	
52	-	3	5	3	1	4	16	

**Հաշվետու տարում դասավանդողների մասնագիտական որակների և նրանց աշխատանքի գնահատման աշխատանքները ֆակուլտետում:**

Հաշվետու տարում՝ դասավանդողների մասնագիտական որակների և նրանց աշխատանքի գնահատման մեխանիզմներն ու գործիքները: Դասավանդողների մասնագիտական որակների և նրանց աշխատանքի գնահատման գործընթացի արդյունավետությունն արտահայտող վերլուծություններ:

*Ֆակուլտետի դասախոսական կազմի մասնագիտական որակների և աշխատանքի գնահատման իրականացվել է:*

1. Ամբիոնների կողմից իրականացված պլանային դասախոսումների միջոցով (համապատասխան արձանագրությունները պահվում են ամբիոններում):
2. Ուսանողների շրջանակներում անցկացված ծպտյալ հարցումների միջոցով, որոնց արդյունքում որոշվել է դասախոսի վարկանշային ցուցիչը կազմավորող հայտանշերից մեկը:
3. Դեկանի և նրա տեղակալների կողմից ուսանողների հետ պարբերաբար անցկացվող զրույցների և քննարկումների միջոցով:

*Արդյունքները քննարկվել են համապատասխան ամբիոնների նիստերում և ֆակուլտետի խորհրդում, ինչպես նաև որակի մշտադիտարկման վարչության աշխատակիցների հետ հանդիպումներում:*

**Հաշվետու տարում դասավանդողների կատարելագործմանն ուղղված միջոցառումները ֆակուլտետում:**

Դասավանդողների կատարելագործման միջոցառումների պլանները՝ ըստ մեթոդական, մասնագիտական և բարեփոխումների ուղղվածությունների:

*Հաշվետու տարում ամբիոնների (և դեկանատի) աշխատակիցները (թվով 15 աշխատակից) մասնակցել են վերապատրաստման աշխատանքներին, ամբիոնների դասախոսների ակտիվորեն մասնակցել են դասախոսների արդյունքների քննարկումներին, աբիոններում իրականացվող (այդ թվում՝ հրավիրյալ մասնագետների կողմից անցկացվող) պարբերական սեմինարներին, գիտաժողովներին:*

VI. ՀԵՏԱՉՈՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՉԱՐԳԱՅՈՒՄԸ ՖԱԿՈՒԼՏԵՏՈՒՄ

**Ֆակուլտետը հաշվետու տարում իրականացրել է հետազոտական ոլորտում իր հետաքրքրությունները և հավակնություններն արտահայտող ռազմավարություն:**

Վերլուծել հաշվետու տարում ֆակուլտետում հետազոտական ոլորտում հետաքրքրությունների և հավակնությունների ռազմավարության արդյունավետությունը և արդիականությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

*Ֆակուլտետի ամբիոններում և գիտական լաբորատորիայում ինտենսիվորեն իրականացվում են գիտական, գիտամեթոդական հետազոտական աշխատանքներ: Ֆակուլտետում իրականացվում են ՀՀ Գիտության կոմիտեի կողմից բյուջեային ֆինանսավորմամբ երկու թեմաներ (դեկավարներ՝ Հ. Միրայելյան, Է. Կոկանյան) և մեկ թեմատիկ ֆինանսավորմամբ գիտական թեմա (դեկ. Է. Կոկանյան):*

**Ֆակուլտետի գործունեությունը հետազոտական գործունեության միջազգայնացման ուղղությամբ:**

ԱՊՀ երկրներում գրախոսվող մասնագիտական ամսագրերում հրատարակումների թիվ

Հ/Հ	Հեղինակ (ներ) ազգանունը, անունը	Վերնագիրը	Պարբերականը (նշել պարբերականի ամբողջական անվանումը)	Հատորը	Համարը	Էջերը	Տպագրության վայրը	Տարին
1	2	3	4	5	6	7	8	9
1	H.G. Demirkhanyan, R.B. Kostanyan G.G. Demirkhanyan	YAG:Yb <sup>3+</sup> crystal as a potential material for Optical temperature sensors	Laser Physics	28		doi.org/10.1088/1555-6611/aa92f6_1_5	Russian Federation	2018
2	Г.С. Микаелян	Мотивационные признаки научного прекрасного в процессе обучения математике	вісник черкаського університету серія педагогічні науки,		№ 2	8	г. Черкассы, Украина	2018
3	Г.С. Микаелян	Познавательные признаки научного прекрасного в процессе обучения математике	вісник черкаського університету серія педагогічні науки,		№ 5	6	г. Черкассы, Украина	2018
4	Г.С. Микаелян	О ценностно-ориентированном обучении математике	вісник черкаського університету серія педагогічні науки,		№ 8	5	г. Черкассы, Украина	2018
5	Г.С. Микаелян	Эстетическое отношение в процессе обучения математике	вісник черкаського університету серія педагогічні науки,		№ 14		г. Черкассы, Украина	2018
6	Г.С. Микаелян	Прекрасное и образовательный потенциал математики	Сб. статей vii межд. научно-практической конф., современные тенденции естественно-математического образования: школа – вуз",		часть 1	4	Соликамск, РФ	2018
7	Г.С. Микаелян	Формирование волевых качеств учащихся в процессе обучения математике	Сб. статей xiv всероссийской научно-практической конф. «артемовские чтения»: «современное образование: научные подходы,			4	г. Пенза, РФ	2018

			опыт, проблемы, перспективы»,					
8	Г. С. Микаелян, А. В. Еномян, Н.Б Маргарян	О формировании национальных базовых ценностей в процессе преподавании алгебре	Сб. статей всероссийской научно-практической конф. с межд. участием „исследования гуманитарного потенциала математики в формировании базовых национальных ценностей детей имолодежи”			7	г. Перм, РФ	2018
9	L.G.Ghulghazaryan L.V.Khachatryan	forced vibrations of a two-layer orthotropic shell with an incomplete contact between layers	mechanics of composite materials	53	6	821-826	Latvia	2018
10	L.A. Aghalovyan, L.G.Ghulghazaryan	forced vibrations of a two-layered shell in the case of viscous resistance	<i>journal of physics: conf. ser.</i>	991		012002	UK	2018
11	А. Т. Мкртчян	о ввoдном курсе логики в системе подготовки учителей математики	современное образование: научные подходы, опыт, проблемы, перспективы, сб. ст. хiv межд.науч.–прак. конф. "артемовские чтения"			3	г. Пенза, РФ	2018
12	А. Еномян	о нравственной значимости обучения ценностным ориентациям	современное образование: научные подходы, опыт, проблемы, перспективы, сб. статей хiv международной научно-практической конф. «артемовские чтения»			3	г. Пенза, РФ	2018
13	Л. Арабаджян	однородное двукратное уравнение Винера-Хопфа с симметрическим ядром в консервативном случае	математические заметки российской АН				Москва	2018

14	Г. С. Микаелян	Проблема формирования ценностей в системе обучения учителей математики	Сб. статей междунаучно-практической конф. «Подготовка специалистов в сфере образования и менеджмента: европейское измерение»,				г. Черкассы, Украина	2018
